

ՀԱՍԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՓՍԻՄԵ ԶԱՆՓՈԼԱԴՅԱՆ

ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԶՎԱԶԵՎ
Ա Ն Ո Թ Ն Ե Ր Ը

Դվին քաղաքի պեղումների ընթացքում միջնադարյան
պիրամիդայի և կենցաղային այլ իրերի հետ միասին հայտնա-
բերված են նաև մեծ քանակով կավե հասա, ամուր խեցի ու-
նեցող ձվաձև անոթներ:

Ձվաձև այս անոթներից առաջներում մեծ քանակությամբ
հայտնաբերված է ինչպես Անդրկովկասի զանազան հնավայրե-
քում (Անի, Ասրերդ, Թրիլիսի, Դմանիսի, Օրան-կալա, Շաքե-
բան, Կարալա, Հին Գանձակ), նույնպես և Միջին Ասիայում
(Թերմանդ, Դրիմում, Մոսկվայում, Վոլգայի ափերին (Սարայ,
Բուլդար, Բիլար), Սիրիայում, Պաղեստինում, Եգիպտոսում և
այլ երկրներում:

Դիտությամբ մեջ մինչև հիմա այս անոթների ծագման և
նշանակության վերաբերյալ ընդհանուրի կողմից ընդունված
կարծիք գոյություն չունի: Այդ պատճառով էլ այդ անոթներին
ամեն մի նոր հայտնաբերում հնագիտության համար մեծ հետա-
քրքրություն է ներկայացնում:

Մի շարք մասնագետներ զբաղվել են այս անոթների ու-
սումնասիրությամբ, երբեմն հատկապես, երբեմն էլ այլ և այլ
անոթներով և փորձել են բացատրել նրանց ծագումն ու նշանա-
կությունը¹:

¹ Այս կավե ձվաձև անոթների մասին եղած գրականությունն իր ժամա-
նակին ամփոփել են Յ. Ленц—О глинных сосудах с коническим дном, на-
ходимых в пределах Мусульманского Востока. ЗВО, т. XV. 3. Виногра-
дов—Сфероконические сосуды с узким головным отверстием. Казан-
ский Музейный Вестник № 2, 1922, стр. 75—119.

Н. Я. Марр, Ани, стр. 95—96.

И. Орбели, Каталог Анийского Музея древностей, 1910г., стр. 73.

И. Орбели, Ртутные сосуды (ձեռագիր):

Այս անոթները հիմնականում հայտնաբերված են 11—13-րդ դարերին պատկանող իրերի կոմպլեքսներում, ուստի և վերադրվում են այդ ժամանակաշրջանին:

Ուսումնասիրողներից ոմանք նկատի առնելով անոթների տարածման տերիտորիան (Առաջավոր և Միջին Ասիա, Կովկաս, Հարավային Ռուսաստան) և ժամանակաշրջանը, նրանց ծագումը և տարածումը կապում են մահմեդական կուլտուրայի հետ¹:

Այս անոթների ծագման վերաբերյալ կան նաև մի քանի այլ կարծիքներ: Ոմանք նրանց համարում են եղիպտական, ոմանք՝ յիսուսիկյան, և մի քանիսն էլ՝ արարպիական, իսկ նրանց լայն տարածումն այլ երկրներում համարում են հետևանք միջազգային առևտրական հարաբերությունների:

Շատ ավելի բազմաթիվ են անոթների նշանակություն վերաբերյալ գոյություն ունեցած տեսակետները:


Այսպես, օրինակ, ուսումնասիրողների մի զգալի մասը պնդում է, որ այդ անոթները սնդիկ պահելու և տեղափոխելու համար են, մի այլ խումբ կարծում է, որ դրանք միջնադարյան պայթուցիկ, կամ հրձիգ նռնակներ են, կան նաև կարծիքներ, որ իբր պրանք միջնադարյան ճրագներ են, ճարտարապետական դարձարանքներ են, կրոնական նշանակություն ունեցող անոթներ, անապատներում ջուր տեղափոխելու համար գործածվող կամ ոսկե ավազափողի պահելու անոթներ, ճայնարձակներ և, վերջապես, զանազան թանկարժեք նյութեր, գեղեր և այլ հեղուկ նյութեր պահելու անոթներ:

Այս բոլոր վիճելի խնդիրների պարզաբանման համար առանձնապես կարևոր է այնպիսի մի մեծ առևտրական և արհեստավորական քաղաքի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթների ուսումնասիրությունը, ինչպիսին է Դվինը:

Դվինում ձվաձև անոթները հայտնաբերվել են քաղաքի միջնաբերդում, միջնաբերդի հրապարակում և ստորին բերդի տերիտորիայի վրա, այսինքն առաջին տեղամասի 1b, 2a, 5c, d, 7 a, b, c, d, 8 a և 9 c քառակուսիներում, մեծ մասամբ նրանց մեջ բացված խոր հորերում:

Մեր տրամադրության տակ եղած անոթները 44 հատ են, որոնցից մեկը հայտնաբերված է 1939 թ., 32-ը՝ 1946 թվին, 10-ը՝ 1947 թ. և մեկը՝ 1948 թ., որոնք բոլորն էլ պահվում են Հայկ. ՍՍՌ ԳԱ Պետական Պատմական թանգարանում:

¹ 3. Виноградов, նշած աշխատությունը:



Ձվաձև անոթների տարատեսակությունները՝
 № 179± հուլիցիան 1946 թվականի պեղումներից:

Այս անոթների մեջ հիմնականը և բնորոշը ձվաձևն է, նրա տարրեր տարատեսակություններով՝ ներս ընկած կողով, երկարեցված հատակով, ուռուցիկ փորով, կամ երկարեցված վզով և կարճացված հատակով: Այս սովորական ձևերից ամենից ավելի տարբերվում են երեք անոթներ, որոնք դրանցված են 1794 կոլեկցիայի 295, 299, 442 ենթահամարների տակ: Սրանց միջին մասն ավելի գլանաձև է, իսկ հատակը կարճ, որն այնուամենայնիվ չի շեղվում իր հիմնական սրածայրությունից: 1794/299 անոթն իր միջին գլանի վրա ունի նաև լայն ուռուցիկ գոտի:

Անիի պեղումների ժամանակ հայտնաբերվածների մեջ կան նաև մի քանի բազմակող անոթներ¹:

Անոթների վերին մասում՝ բերանը նեղանալով կազմում է մի փոքրիկ անցք, որը եզրված է կիսազնդաձև շուրթերով: Անոթի այդ ուռուցիկ բերանը շատ հարմար է ամուր խցանման համար, ըստ որում փայտե, կամ որևէ փափուկ իրից պատրաստված խցանը հատուկ թելով ամրացվել է անոթի շրթունքի ակոսված շրջանակին: Դրա համար էլ անոթի այս մասն ամենից ավելի է պահպանել իր հիմնական և անխախտ ձևը: Ուսումնասիրողներից մի քանիսը² իրավացիորեն գտնում են, որ բերանի այս պահպանողական ձևն ավելի բնորոշ է անոթի համար, քան նրա չափազանց մեծ տարատեսակություններ ունեցող ձվաձևությունը:

Դվինում հայտնաբերված անոթները հիմնականում միևնույն չափին են՝ 12,8 սմ. միայն մի դեպքում՝ 14,8 սմ (№ 1794—299):

Շնորհիվ իրենց պատերի արտակարգ հաստություն, այս ոչ մեծ անոթներն ունեն ծանր քաշ և փոքր տարողություն:

Անոթները պատրաստված են հրակայուն, լավ թրծած կավից և խեցու ամրությամբ ու խտությամբ շատ նման են այսպես կոչված «քարի խեցուն»:

Ըստ Բ. Ա. Շելկովնիկովի³, իրենց խեցիի ամրությամբ այս անոթները բաժանվում են երեք խմբի՝

Առաջին խմբի մեջ են մտնում համեմատաբար թույլ խե-

¹ Н. Я. Марр, Ани, стр. 95.

² З. Виноградов, стр. 76.

³ В. А. Шелковников, Художественная керамическая промышленность средневековой Армении. Изв. АрмФАН № 3—4 (17—18), 1942.

ցի ունեցողները՝ Մոսսի շկալայի № 4—5 կարծրությամբ: Սրանց թիվը քիչ է: Երկրորդ խմբին պատկանողներն ունեն ավելի կարծր խեցի: Մոսսի շկալայի № 6 ամբողջյան: Սրանք ունեն կանաչավուն և գորշ արտաքին: Երրորդ խմբի մեջ են մտնում ամենակարծրերը, որոնք ունեն կվարցի կարծրություն (Մոսսի շկալայի № 7):

Անոթները լինում են տարբեր գույնի՝ թուխ-մոխրագույն, գորշ, երբեմն կանաչավուն, երբեմն դեղնավուն: Անոթի գույնը հիմնականում ստաջացել է կավի տեսակից, կամ շագախի պատրաստման եղանակից և երբեմն էլ թրծման ջերմաստիճանից:¹

Հանդիպում է նաև շերտավոր խեցի, որ կարող է երեք հանգամանքի արդյունք լինել. 1. շերտավորությունն առաջ է գալիս նախ նյութի ոչ միատարր լինելուց, 2. թրծվածություն ջերմաստիճանի տատանումներից և 3. դիտավորյալ կերպով արտաքին շերտն ավելի փափուկ կավից լինելուց, որպեսզի զարդանկարները հեշտությամբ փորագրվի խեցու վրա:

Անոթների մեջն ավելի անհաղորդ դարձնելու համար ծածկված է լինում հեղուկ նյութի՝ լաքի բարակ շերտով: Անոթի ներսը լաքապատելու համար բոլորովին պատրաստի անոթի մեջ որոշ քանակով հեղուկ լաք էին լցնում և բերանը փակելով՝ անոթը մի քանի անգամ հարում էին, որի ընթացքում հեղուկը հավասարապես նստում էր անոթի ներսի պատերին: Դրանից հետո անոթի միջից թափում էին ավելորդ հեղուկը և ապա անոթն ուղիղ դիրքով չորացնում: Այդ պատճառով էլ անոթի հատակին լաքի շերտն ավելի հաստ է ստացվում, քան վերին մասերում: Կան լաքով պատելու նաև այլ եղանակներ՝ օրինակ, երբեմն կիսապատրաստ անոթը վրձինով կամ որևէ փափուկ իրով ծածկում էին լաքով: Շատ հազվադեպ դեպքերում անոթի արտաքին մակերեսը ևս պատում էին ջնարակով կամ լաքով:

Այս անոթները պատրաստված են գուրգնի վրա:²

¹ Այս անոթների պատրաստման տեխնիկայի, նրանց կառուցվածքի և հատկապես նրանց զարդարանքները մանրամասնորեն ուսումնասիրել է ակադեմիկոս Հ. Օրբելին իր «РТУНЫЕ СОСУДЫ» ձեռագիր աշխատության մեջ:

² Էմիլիաթի Արևելքի բաժնում պահպանվում է Բիլարում հայտնաբերված մի քանի կաղապար (131 $\frac{98}{3-C}$), որն ամենայն հավանականությամբ

Տարբեր վայրերում հայտնաբերված այս անոթները, հիմնականում պահպանելով իրենց արտաքին միանմանությունը, խիստ կերպով իրարից տարբերվում են իրենց խեցու որակով ու գույնով և զարդանկարներով: Այսպես, օրինակ՝ Հայաստանում, բացի Դվինից, նման անոթներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են նաև Անիում¹, բայց նրանք իրենց կավի տեսակով, պատրաստման տեխնիկայով, զարդանկարների մոտիվներով տարբեր են Դվինի անոթներից: Տարբեր են նաև Գանձակում, Օրան-Կալայում, Կարալայում, Նախիջևանում, Շաքերանում, Դմանխում և Թբիլիսիում գտնված անոթները:

Բացի դրանից, եթե անդրկովկասյան անոթների համար բնորոշ է մոխրագույն-գորշ և գորշ-կանաչավուն գույները, ապա միջինասիական անոթները, օրինակ՝ Թերմեզում հայտնաբերվածները, ունեն կանաչավուն խեցի, իսկ Վոլգայի ափերին (Սաբա, Բուզաք, Բիլաք) հայտնաբերված անոթներին հատուկ է բացկարմիր խեցին:

Այսպիսով, անոթների արտադրությունը կապել ուրե՛է մի վայրի հետ, ճիշտ է՛է, քանի որ նրանք լայն գործածություն են ունեցել տարբեր երկրներում և հատուկ չեն եղել այս կամ այն գավառանքի մարզկանց կամ միայն մի ուրե՛է երկրի, քանի որ նրանք նույնպիսի առատություն հանդիպում են ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչություն ունեցող քաղաքներում: Նրանք տարբեր երկրներում հանդիպում են հավասարապես ինչպես արաբական, այնպես էլ պարսկական և հայկական գրերով ու մինչև այժմ չվերծանվող խորհրդանշաններով:

Այս անոթների միջոցով տարբեր երկրների միջև կատարված առևտրական կապերը նույնպես դժվար է որոշել, քանի որ, ինչպես ցույց է տալիս անոթի խեցու ուսումնասիրությունը, նրանք սովորաբար ունեն տեղական ծագում. անոթները թե՛ իրենց կավի տեսակով, թե՛ գույնով ու հատկապես զարդարանքների ոճով խիստ կերպով տարբերվում են իրարից ոչ միայն հեռավոր տեղերում գտնվածներով, ասենք՝ Դվինում գտնվածները, Միջին Ասիայում գտնվածներից, այլև միևնույն երկրի տարբեր

Ժառայել է մետաղյա անոթներ ձուլելու համար և թերևս պատկանում է ավելի ուշ ժամանակներին՝ 11—15-րդ դարերին կամ հետագային, երբ արդեն կավի ձվաձև անոթներն վերացել էին գործածությունից:

¹ Н. Я. Марр, Ани, стр. 95.

քաղաքներում հայտնաբերվածները, ինչպես օրինակ՝ Դվինում հայտնաբերվածները Անիում գտնվածներից:

Օրան-Կալայում¹ և Դվինում հայտնաբերված արտադրական խոտանի մնացորդները հնարավորություն են տալիս անվիճելի համարել ձվաձև անոթների տեղական արտադրության խնդիրը առևտրական և արհեստավորական համարյա բոլոր կենտրոններում:

Անոթների սրոշ մասը զարգարված են: Անիի պեղումներից հայտնաբերված անոթների ուսումնասիրությունը, որոնք հիմնականում ճախ զարդաքանդակված են, ակադեմիկոս Հ. Օրբելուն բերել են այն եզրակացություն, որ այդ անոթները, որպես կանոն, զարդարված են հատուկ դաճի միջոցով²: Դրան հակառակ, Դվինում հայտնաբերված անոթներից միայն 6 հատն են զարդարուն՝ (1794/54, 290, 337, 373, 377, 409), իսկ մնացած բազմաթիվ օրինակները զարդարանքներ չունեն:

Զարդարուն անոթները պատրաստված են ավելի ուշադիր կերպով և նրբությամբ: Անոթները նախշված են դեռևս թրծելուց առաջ: Նախշերի ձևերը խիստ տարբեր են:

Ն 1734/54 անոթը զարդարված է ուղղաձիգ հյուսվածքային գոտիներով, Ն 1394/337-ի վերին կողի վրա կան երկու շարք, ուսուցիկ սեպերի և վարդյակների՝ իրար հաջորդող գոտիներ: Ն 1794/373 անոթի վերին կողը բաժանված է ութը եռանկյունների, որոնց մեջ տեղավորված են վարդյակներ. կենտրոնականը մեծ է, իսկ նրա շուրջը եղածները՝ մանր: Ն 1794/377-ն ունի վերից վար ուղղաձիգ նուրբ հյուսվածքավոր 8 գոտիներ, իսկ Ն 1794/409-ն իր միջին մասում ունի կետերից կազմված շրջանակների մի գոտի:

Անոթների սրոշ մասի վրա, անկախ նրանց զարդարանքներից, փորագրված են լինում զանազան խորհրդանշաններ, կամ արաբատառ ու հայատառ արձանագրություններ:

Դվինում հայտնաբերված անոթների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանք բոլորն էլ իրենց վրա ունեն արձանագրություններ կամ խորհրդանիշներ: Ի տարբերություն զարդարանքների, խորհրդանիշները փորագրված են անո-

¹ Джафар Заде, Археологические работы в Азерб. ССР, Доклад на сессии Археологов Закавказья.

² И. Орбели, Ртутные сосуды.

թը թրծելուց հետո, և աչքի են ընկնում իրենց կատարման տեխնիկայի անփութությամբ, որի հետևանքով շատ հաճախ տառերը և նշաններն անընթեռնելի ու անճանաչելի են դարձել:






Պատահում է, որ միևնույն նշանից հանդիպում է մի քանի անոթների վրա, այսպես օրինակ՝ № 1794/165 անոթի խորհրդանիշը հանդիպում է 8 անգամ, ըստ որում չորս անգամ ծայրի քառակուսին դեպի ցած (1794—165, 291, 437, 438), մի անգամ ատամները աջ, ծայրի քառակուսին ձախ (1794/443) մի անգամ ատամները դեպի ձախ, բայց ծայրի քառակուսին վեր (1641/34), մեկ անգամ ատամները վեր, իսկ քառակուսին աջ (1794/436) և մեկ անգամ էլ խորհրդանշանը երկու կողմից առնված է արարական արձանագրության մեջ (1794/440): Հետաքրքրական է այն հանգամանքը, որ միևնույն նշանագիրն ունեցող չորս անոթներն էլ (1794—436, 437, 539, 440) դառնվել են միևնույն վայրում, այսինքն 1-ի տեղամասի 7 Ե քառակուսում:

Արարական արձանագրությունների ընթերցումը, որ կատարել է պատմական դիտությունների թեկնածու Լևոն Գյուլգալյանը, տառաձևերի ազավադումների հետևանքով ստացվում է խիստ պայմանական, բայց և այնպես 1774—295, 299 անոթների վրայինը կարգացվում է «Շիրին», որ ամենայն հավանականությամբ կնոջ անձնանունն է, շիրին կարող է նշանակել նաև քաղցր, սակայն, ինչպես կատենենք մյուս արձանագրությունից, ավելի հավանական է նրա անձնանունը լինելը:

Այս երկու անոթները գտնված են միևնույն առաջին տեղամասի 7 քառակուսում: Նրանք միմյանց շատ նման են և խիստ կերպով տարբերվում են մյուսներից:

№ 1794/167, 1857/150 և 1857/158 անոթներն ունեն միևնույն արձանագրությունը՝ «Միր Նադիր» (այսինքն՝ «Էմիր Նադիր»), կամ «Ամիր Նադիր», այսինք «պատրաստեց Նադիրը»: Նախորդից մի փոքր տարբեր է № 1794/168 և 1764/298 անոթների արձանագրությունները, որոնք ընթերցվում են «Մին Նադիր», այսինքն Նադիրից, որ նշանակում է պատրաստել և Նադիրը:

Սակայն եթե հաշվի առնենք արձանագրության անփութ փորագրությունը, ապա հավանական է, որ վերջին երկու արձանագրություններն էլ պետք է ընթերցել առաջինների նման՝ «Միր Նադիր», քանի որ տարբեր ընթերցման պատճառն առաջին



Անոթների վրա փորագրված արձանագրությունները
և խորհրդանշանները



1794-373



1794-375



1794-300




1794-166



1794-438




1794 337




1794-167




1847-157



1794-290




1794-377




1794-291


Անոթները վրա փորագրված արձանագրությունները
և խորհրդանշանները




1847-156



1794-297



1794-294



1794-376



1847-14




1897-155



1794-43



1794-293



1794-408



1794-442

Անթների վրա փորագրված արձանագրությունները
և խորհրդանշանները

ղծիկի պակասն է, որ կարող է առաջացած լինել անփութության կամ պակաս դրագիտության հետևանքով:

№ 1794/296 անոթի վրա ընթերցվում է «Ջավահիր», № 1794/164-ի վրա «Բեկ», 1847—13-ինը՝ «Խուդադ», 1794/96-ինը՝ «Արդ-Ջեմալ» և 1847/156-ինը՝ «Արդ» (Արդ—նշանակում է ըստ-բուկ), 1794/297-ինը՝ «Յուսուֆ» և 1794/294-ինը՝ «Ահմեդ»:

Հետաքրքրական է 1794/376 անոթի արձանագրությունը. այստեղ քանդակված են երկու իրարից անջատ նշաններ, նրանցից մեկն արաբատառ է և ընթերցվում է «Օմար», երկրորդը կարելի է դիտել որպես նույն Օմարի հայերեն փակագիրը: 1847/14, 155 անոթների նշանները նույնպես կարելի է հայկական փակագրեր համարել:

№ 1794/239, 292 անոթների խորհրդանշանները շատ նման են Մատենադարանի № 134 ձեռագրի (18-րդ դար) խորհրդանշան հմայելուն:

Նման արձանագրությամբ անոթ գտնվել է նաև Ադրբեջանում:

Ինչպես ինձ հաղորդել է Ադրբեջանի Պատմության թանգարանի դիրեկտոր ընկ. Սալլի Կադիևը, 1944 թվին Կաբալայում հայտնաբերված է մի անոթ, որի վրայի քուֆի արձանագրությունն ընթերցվում է «Մուսա»:

Ինչպես տեսնում ենք, Դվինի անոթների արձանագրությունները մեծ մասամբ արաբական են: Հետաքրքրական է նշել մի հանգամանք, որ Անիում հայտնաբերված անոթների վրա եղած արձանագրությունները, որոնք շատ փոքր թիվ են կազմում, հիմնականում հայերեն տառեր են՝ «Դ» «Ջ» և այլն: Այս խնդրի պարզարանման համար անհրաժեշտ է հիշել Անի և Դվին քաղաքների ազգաբնակչության կազմը՝ Դվինում մահմեդական բնակչությունը զգալի տոկոս է կազմել, իսկ Անիում նա չնչին է եղել քրիստոնեական բնակչության համեմատությամբ:

Անիում հայտնաբերված անոթների նշանները, չնայած իրենց մեծ տարատեսակության, հիմնականում բաժանվում են երկու տարբեր խմբերի, որոնցից մի մասը մոտենում են հայկական տառերին, իսկ մյուսը՝ կռաքարերի վրա եղած նշաններին, որից նա ենթադրում է, որ, հավանաբար, դրանք անոթի տարողությունը ցույց տվող նշաններ են¹:

¹ Н. Я. Марр, Ани, стр. 95.

Այս տեսակետը հաստատելու հնարավորությունից ղրբկված խնք, քանի որ մեր ձեռքի տակ չկան Անիի կշռաքարերն՝ իրենց նշաններով, իսկ Դվինի անոթների նշաններն, ինչպես կարելի է համոզվել եղած գծադրություններից, մեզ այդ նույն եզրակացության չեն բերում: Հենվելով վերը բերված տվյալների հիմնական մասի վրա, գալիս ենք այն եզրակացության, որ անոթների վրա եղած արձանագրությունները անոթի տիրոջ անունն են և ցույց են տալիս, որ փորագրված են արդեն թրծված անոթը ձեռք բերելուց հետո:

* * *

Ինչպես վերը նշեցինք, այս անոթների նշանակության վերաբերյալ դոյություն ունեն բաղմամբիվ կարծիքներ:

Ամենատարածված կարծիքն այն է, որ այս անոթները ծառայել են որպես սնդկամաններ՝ սնդիկ պահպանելու և այն տեղափոխելու համար: Այս կարծիքն այնքան տարածված է, որ շատերն այս անոթները պայմանականորեն անվանում են սնդկամաններ:

Առաջին անգամ այս կարծիքը հայտնել է Չենստները մի անոթի մեջ սնդիկի փոքրիկ հատիկներ հայտնաբերելուց հետո¹: Մոսկվայի Կրեմլի մոտ գտնված է սնդիկով լի մի այդպիսի անոթ²: Վիսոցկին Ղրիմում պեղել է նույնպես սնդիկով լի³ մի անոթ, որի հետ միասին հայտնաբերված են Ղրիմի և Բուլղարի խաների բաղմամբիվ դրամներ:

Պրոֆ. Մասկենիկը անոթի պատերի միկրոսկոպային ուսումնասիրության միջոցով հայտնաբերել է սնդիկի հատիկների և մոմի մնացորդներ: Այս բոլորն իբրև հիմք ընդունելով՝ Լիխաչովը⁴ նույնպես ընդունում է, որ այս ձվաձև անոթները ծառայել են սնդիկի տեղափոխության համար:

Դոյություն ունեն նաև մի շարք այլ տեղեկություններ, որոնք այս տիպի ձվաձև անոթները կապում են սնդիկի հետ:

¹ Ленц, նշած աշխատությունը:

² Виноградов, նշած աշխատությունը:

³ Высоцкий, Несколько слов о древностях воложской Болгарии. Известия Общества Археологии, Ист. и Этнографии при Казанском Университете, т. XXIV, вып. 4, 1908, стр. 349.

⁴ А. Ф. Лихачев, О загадочных сосудах сфероконической формы из Воложской Булгарии. Труды IV археолог. съезда, стр. 34—35.

Այսպես, օրինակ, Ն. Ի Վեսելովսկին գրում է¹, որ Թուրքեստանում նման անոթները ծառայել են սնդիկ տեղափոխելու համար:

Համաձայն Թ. Թորամանյանի տված տեղեկություն, Շապին Գարահիսարում, որի բնակիչները գաղթել են Անիից, մինչև վերջերս էլ նման անոթներում պահում էին սնդիկ, որից պատրաստում էին հատուկ դեղ՝ մաղերի պարագիտներին ոչնչացնելու համար², ինչպես նաև զանազան վերքերի և հատկապես քոսի դեմ դործածելու համար:

Ինչպես տեսնում ենք, այդ անոթների սնդկաման լինելը հաստատող փաստերը բավական ծանրակշիռ են և համոզող, սակայն այստեղ ակամա հարց է ծագում՝ միջին այսպես մեծ քանակով անոթներ կարող էին ծառայել միայն սնդիկի պահպանման և տեղափոխման համար:

Սնդիկի դործածությունը միջին դարերում բավական լայն տարածում է ունեցել և հատկապես մեծ նշանակություն է ստացել, երբ արքիմիկոսներին հայտնի է դարձել մետաղների ամալգամացման տեխնիկան³: Առաջին անգամ այս տեխնիկան օգտագործվում է եգիպտացիների կողմից, ապա նաև արաբների, որոնց միջոցով էլ հետագայում տարածվում է Ասիայում և Նվադայում:

Միջնադարում սնդիկը համարվում էր բոլոր մետաղների բաղադրիչ մասը:

Ըստ Ամիր Դովլաթի՝ միջնադարում հայտնի էր սնդիկի 20 տարբեր անուններ:

Սնդիկը լայն տարածում է ունեցել նաև բժշկություն մեջ:

Կարծես թե այս բոլորը գալիս է հաստատելու վերը բերված կարծիքը, սակայն չնայած այս բոլորին, շատ ավելի ծանրակշիռ փաստեր գալիս են հերքելու այն:

Սնդիկը բնության մեջ հանդիպում է զլիաժորապես միա-

¹ Н. И. Веселовский, ЗВО, т. XIII, вып. 4.

² И. А. Орбели, Каталог Анийского Музея древностей, вып. I. Թ. Թորամանյան, նման Մառին 1911.21. Архив каб. Марра. М. ИИМК АН СССР—В 1440 Л 58.

³ Այս մասին մանրամասն տես՝ Т. Мхитарян, Амальгамы по древнеармянск. рукописям—ձեռագիր Մատենադարան:

ցումթյուններով, հատկապես ծծմբի միացությամբ (HgS), որ հայտնի է ցենոթեր կամ կինովար անունով:

Մակայն, ինչպես հայտնի է, բնության մեջ սնդիկը գտնվում է շատ սահմանափակ քանակությամբ և շնորհիվ իր ֆիզիկո-քիմիական հատկությունների նրա փոքր քանակն իսկ ունենում է մեծ ազդեցություն, ուստի այդպիսի անոթների մեջ նրա պահպանման կամ տեղափոխության փաստը կարող էր լինել շատ մասնակի և հազվագյուտ երևույթ:

Այս անոթների սնդկաման լինելու մյուս հերքող փաստն էլ այն է, որ այդ անոթներն իրենք ունեն բավական զգալի քաշ, և եթե դրան ավելացնենք նաև սնդիկի քաշը (սնդիկի տեսակաբար կշիռը 13,7 է) կարելի է պատկերացնել, թե ինչքան կարող էր ծանր լինել ամեն մի սնդիկով լի անոթ:

2. Մյուս տարածված կարծիքն է, որ այս ձվաձև անոթները ծառայել են որպես միջնադարյան հրձիգ նռնակներ, որոնք լցվել են պայթուցիկ նյութերով և նետվել ռազմական ամրությունների վրայից դեպի թշնամու զորքը, որպեսզի պայթյունից առաջացած ամանի մանր բեկորները ցրվելով՝ ֆլասեն թշնամու կենդանի ուժին:

Այս տեսակետի հեղինակն այդ եզրակացություն է եկել 1847 թ. Սիրիայի Տրիպոլիս քաղաքի մի հնազույն շենքի հիմքի տակ 60 ձվաձև անոթների հայտնաբերման կապակցությամբ: Նա իր ուսումնասիրության մեջ գտել է, որ արարներն այդ օգտագործել են որպես ձեռքի նռնակ ընդդեմ խաչակիրների:

Անոթներից մեկի վրա եղած «Bi Hama» արձանագրությունը (այսինքն պատրաստված Համայուն) է՛լ ավելի է համոզել հեղինակին:

Անոթի հատկությունները նա բացատրում է հօգուտ իր տեսակետի: Այսպես, փոքր բերանը՝ պատրույգի հարմարության համար է, անոթի հաստ պատերն ուժեղացնում են պայթյունի ուժը, ներսից պատերի վրա գոյություն ունեցող մոմն անհրաժեշտ է պայթուցիկ նյութերի և անոթի պատերի շփումն արգելու համար: Սնդիկը համարում է պայթուցիկ նյութի բաղադրիչ մասերից մեկը¹:

Այս տեսակետի դեմ իր ժամանակին դուրս է եկել Լիխա-

¹ Лещ, նշած աշխատությունը:

չովը¹, որն իրավացիորեն որպես առաջին և հիմնական ժխտող փաստ առաջ է քաշել այդ տիպի անոթների շատերի հարուստ զարդաքանդակները, որոնք տվյալ դեպքում պետք է որ բոլորովին ավելորդ լինեին: Երկրորդ, անոթի պատերի նյութն ամուր է ու միաձուլ և շատ դեպքում հրակայուն, ուստի և շատ անհարմար էրը հրձիգ ումը գործածելու համար: Երրորդ, անոթի ձևաձև նեղ բերանը շատ անհարմար է հրձիգ նյութն արագ լցնելու համար, որ կարևոր հանգամանք է պատերազմական պայմաններում, և, վերջապես, չորրորդ՝ ըստ պատմական տեղեկությունների արաբներին հայտնի չի եղել պայթուցիկ նյութերի դադարնիքը:

3. Լեխաչովը² առաջ է քաշում մի այլ տեսակետ. նա ենթադրում է, որ այս անոթները ծառայել են սրպես ճրագ, որոնց մեջ վառվել է նավթ: Այս կարծիքը պաշտպանել են նաև հնագետներ Վինոգրադովը և Գորոզցովը³:

Սակայն այս տեսակետը նույնպես բավական քիչ համոզեցուցիչ փաստեր ունի: Նախ և առաջ ճրագ լինելու փաստը հերքվում է օգնացքի բացակայությամբ, այնուհետև, պատերի անոթների բերանը մեծ մասամբ մաքուր է լինում, հազվադեպ ու օրինակների բերանները միայն ծածկված են եղել մրով:

Հաշվի առնելով այս հազվադեպ օրինակների գոյությունը, շատ հնարավոր է, որ նրանցից մի քանիսը ուշ ժամանակներում որոշ պարագաներում օգտագործված լինեն որպես ճրագ:

4. Կազարինովը⁴ առաջ է քաշում այն կարծիքը, որ այս անոթները ծառայել են որպես ճարտարապետական զարդաբանքներ, որոնք հատուկ երկաթե ձողերով զլխիվայր ամրացվում էին ամրոցների պատերին ու աշտարակների վրա: Այս տեսակետի միակ փաստն այն է, որ անոթների մի մասը գտնված է շենքերի ավերակների հողաթմբերում: Այս կարծիքն ամենից քիչ է համոզեցուցիչ, որովհետև ոչ այդ փոքր անոթների և ոչ էլ նրանց վրայի մանր զարդաբանքները ամրոցների հսկա պատերի զլխին չէին կարող նկատելի լինել:

¹ Лихачев, նշած աշխատությունը:

² Նույն տեղում:

³ Виноградов, նշած աշխատությունը:

⁴ В. А. Козаринов, Описание Билярского и Болгарского городища. Изв. Общ. Археологии и Этнографии при Казанском Университете, т. III, 1880—1882, стр. 89—127.

5. 1872 թվին Տրիպոլիսում մի հնագույն շենքի հիմքի պեղման ժամանակ գտնվել են 60 ձվաձև անոթներ՝ դասավորված շրջանաձև, կենտրոնում ունենալով սովորականից մեծ չափի մեկ անոթ։ Այս հանգամանքը առիթ է տվել ոմանց կարծելու, որ անոթներն ունեցել են պաշտամունքային նշանակություն,¹ կամ հանդիսացել են արցունքի ամաններ²։

Այս անոթները երբեմն հանդիպում են նաև ննջեցյալների հետ թաղված³։ Անոթները պաշտամունքային նշանակությունը հավանական է թվում, բայց կարծում եմ, որ պետք է առաջացած լինի նրա մասսայական գործածությունից շատ ավելի ուշ։

Աղբյուրական շրջանում, հավանաբար, այս անոթները ննջեցյալի ալ և ալ անձնական իրերի հետ դրվում էին դամբարանի մեջ, իսկ հետագայում, երբ այս անոթները դուրս էին գալիս մասսայական գործածությունից, որոշ տեղերում կարող էր շարունակվել ննջեցյալի հետ թաղելու սովորությունը՝ վերագրելով նրանց ինչ-որ խորհրդավոր նշանակություն⁴։

6. Դոյուլթյուն ունի նաև մի ալ կարծիք՝ (Ռիզպուլոֆինսկի),⁵ որ այս անոթները օգտագործվել են անապատային տեղերում ջուր տեղափոխելու համար։ Վինոգրադովն այդ տեսակետը սրբազրում է այսպես. որ իբրև թե այդ ամանները ծառայել են սրբազան ջուր պահպանելու համար՝ Մեկկայի սրբազան «Ջեմ-դեմ» աղբյուրից վերցրած։ Որպես ավելի համոզիչ փաստ, բերում են Թուրքեստանում գտնված երկու անոթ, որոնց ձևը շատ նման է ձկան։ Եվ ապա մի շարք ձկան պատկեր տվող օրնամենտներ։ Այս փաստերով անոթները կապում են նաև ջրի պաշտամունքի հետ։ Վինոգրադովը որպես իր տեսակետը հաստատող փաստ առաջ է քաշում նաև անոթների կանաչ գույնը (մահմեդականների մոտ կանաչ գույնը համարվում է սրբազան)։ Անհրաժեշտ է անմիջապես նշել, որ կանաչ գույնը բնավ էլ բնորոշ էր ձվաձև անոթների համար։ Յուրաքանչյուր վայր ըստ իր կալի հատկություն տարբեր գույն է տալիս։ Այսպես, Թուրքեստանի անոթները կանաչավուն են, Վոլգայի ափին գտնվածները՝ կարմիր, Դվինինը՝ գորշ, և այլն։ Վինոգրադովն

¹ Лихачев, նշած աշխատությունը։

² Виноградов, նշած աշխատությունը։

³ Н. Я. Марр, Ани.

⁴ Лихачев, նշած աշխատությունը։

⁵ Виноградов, նշած աշխատությունը։

ի հաստատումն իր կարծիքի, թվարկում է նաև անոթի մի շարք ֆիզիկական հատկությունները, որոնց հիման վրա նա եզրակացնում է, որ այդ անոթները շատ հարմար են երկար անապատային ճանապարհորդությունների համար: Պատերի հաստությունը և բերանի նեղությունը պետք է պահպանեն ջուրը դուրը ղաղումից:

Այս տեսակետը բոլորովին հավանական չի թվում, որովհետև նախ և առաջ այս անոթները սովորաբար փոքր տարողություն ունեն, որը չէր կարող բավարարել երկար անապատային ճանապարհորդությունների ժամանակ ջրի պահանջին: Մյուս կողմից, անոթների բավական մեծ քաշը կարգելակեր նրանց մեծ քանակով իրենց հետ վերցնելուն, մանավանդ որ այդ ծանր ու փոքրիկ անոթների փոխարեն ճանապարհորդները կարող էին իրենց հետ վերցնել Արևելքում չափազանց տարածված նույն տիպի, բայց ավելի մեծ և թեթև կփեր կամ այլ անոթներ:

7. Գոյություն ունի մի այլ, այս բոլորն ամփոփող տեսակետ, այն է, որ այս անոթներն ունեցել են կենցաղային նշանակություն և ծառայել են այս կամ այն թանկարժեք և շուտ ցնդող հեղուկների, անուշահոտ յուղերի, դեղորայքի (սրտնք շատ դեպքում նաև սնդիկ էին պարունակում իրենց մեջ) և այլ նյութերի պահպանման համար:

Այս տեսակետը պաշտպանում են Հ. Օրբելին և Բ. Շելկոնիկովը: Ն. Յ. Մառը նույնպես գալիս է այն եզրակացության, որ այս անոթները, բացի սնդիկի պահպանության և տեղափոխության համար օգտագործելուց, ծառայել են նաև անուշահոտ յուղերի և այլ դեղորայքի պահպանման համար: Հօգուտ այս կարծիքին են խոսում ոչ միայն այս անոթների մեծ տարածումը և առատությունը, այլև նրանց ֆիզիկական հատկությունները:

Որ այս անոթները պարունակել են հեղուկ նյութեր, և այն էլ ոչ հասարակ հեղուկ նյութ, երևում է նրանց ձևից: Նեղ և փոքր բերանը շատ հարմար է խցանելու և ներսի թանկարժեք հեղուկը դուրը ղիացումից և թափվելուց պահպանելու համար (նույն ձևով են պատրաստում մեր ժամանակակից օդեկոլոնների սրվակները): Անոթի հաստ պատերը պահպանում են անոթը կոտրվելուց: Բրդաձև հատակը շատ հարմար է հեղուկի նստվածքը հատակին կենտրոնացնելու համար, որը չափազանց կարևոր

հանդամանք է միջնադարյան ալքիմիայի և պրիմիտիվ դեղագործություն համար:

Անոթները հնում պահվում էին հավանաբար մի քանի ձևով, նրանց կարելի էր կախել առաստաղից կամ պատից: Նրանց կարելի էր տեղավորել կավից կամ փայտից պատրաստված պատվանդանների վրա և կամ դնել հատուկ կարված բարձրիկների վրա:

Այս նպատակով օգտագործման դեպքում լիովին պատճառարանված են նաև նուրբ զարդարանքները:

Շատ հավանական է, որ այս անոթները որոշ դեպքում օգտագործվում էին նաև սնդիկի պահպանման և տեղափոխություն համար, քանի որ սնդիկը մեծ չափով օգտագործվել է թե ալքիմիայի և թե դեղագործություն՝ հատկապես կոսմետիկայի մեջ: Մի քանի անոթներում հանդիպած սնդիկը և սնդիկի ֆնացորդները կարող են միայն հաստատել այս կարծիքը:

Այսպիսով, բազմաթիվ օբիեկտներով մենք տեսնում ենք, որ Դիլիսում գտնված ձվաձև անոթները, որոնք 11—13-րդ դ.դ. լայն տարածում են ունեցել Միջին Ասիայից սկսած մինչև Կովկաս, տեղական ծագում ունեն և օգտագործվել են անուշահոտ յուղերի, դեղորայքի և այլ շուտ դոլորշիացող հեղուկների պահպանման համար:

РИПСИМЭ ДЖАНПОЛАДЯН
СФЕРОКОНИЧЕСКИЕ СОСУДЫ ИЗ
ДВИНСКИХ РАСКОПОК

Р Е З Ю М Е

При раскопках средневекового армянского города Двин в большом количестве были обнаружены толсто-стенные глиняные сосуды сфероконической формы.

Подобные сосуды происходят из многих средневековых городов Закавказья (Ани, Анберд, Дманиси, Оранкала, Кабала, Гянджа), Средней Азии, Крыма, Поволжья, Сирии, Палестины, Египта и других местностей. Большинство их было найдено в археологических комплексах XI—XIII в. в.

Относительно происхождения и назначения этих сосудов в науке существуют различные мнения. Некоторые ученые на основании территориального распространения сфероконических сосудов связывают их с мусульманской культурой. Другие полагают, что они распространялись путем торговли из определенных мест, и считают их египетскими, финикийскими или арабскими и т. д.

Изучение сфероконических сосудов, в частности, происходящих из Двина, приводит к заключению, что их, несмотря на широкое распространение, нельзя связывать с какой-либо определенной страной и искать один центр их производства. Несомненно, они изготовлялись в различных местах, на что указывает состав и цвет глины. Так, закавказские сосуды имеют различного оттенка серый цвет, приближающийся иногда к черному, среднеазиатские—часто зеленый, а сосуды из Поволжья в большинстве красного цвета. Орнаментация сосудов также имеет большие различия.

Археологические данные свидетельствуют также о местном их производстве. Так, в Двине, Оран-кала и Термезе найдены образцы производственного брака, которые никак не могли быть использованы в быту.

О назначении сфероконических сосудов также имеются различные мнения. Их считают сосудами для хранения ртути, гранатами, архитектурными украшениями, колосниками, ритуальными сосудами и флаконами для сохранения лекарств или других ценных жидкостей.

Изучение двинских сфероконических сосудов подтверждает мнение об их бытовом назначении, о том, что они служили флаконами для духов, настоек, различных химических веществ и в частности могли употребляться для хранения ртути.

Сфероконические сосуды, происходящие из разных мест, украшены богатой орнаментацией, иные целиком, а иные частично. В двинском материале преобладают неорнаментированные сосуды, известно лишь несколько образцов со штампованным орнаментом. Большинство сосудов из Двина имеет на себе надписи арабским и армянским

письмом и знаки, вроде тамги, которые выполнялись на сосуде уже после его обжига, в процессе употребления. Имеется несколько сосудов с одинаковыми знаками, причем они происходят из одного места.

Большая часть надписей, согласно чтению Л. Т. Гюзальяна, содержит собственные имена—Ширин, Ахмед и др. По всей вероятности эти надписи и знаки были начертаны владельцами сосудов и являлись знаками собственности, а не указанием на содержимое или емкость.

Сферокопические сосуды являются весьма интересными памятниками культуры средневекового Востока; несмотря на широкое их распространение, они имеют много местных особенностей, свидетельствующих о большом количестве мест их производства.

